50. ԽՈՋԱ ԱԼԻ

Ժամանակով մեկ բաղրկյան կէղի, անունը Խոջա-Ալի։ Էտի կէրթա խրիտ էնելու, խրիտից օր կը դառնա կիգա, ճամփու մեջտեղ ձեն կիտան, թե՝ «Խոջա՛, եռեսուն ինը մարդ սպաներ եմ, քեզի էլ կսպանեմ՝ կէղնի քառասուն». մեկ էլ ձեն կուտա. «Եռեսուն ինը մարդ սպաներ եմ, քեզի էլ կսպանեմ՝ կէղնի քառասուն», մեկ էլ ձեն կուտա. «Եռեսուն ինը մարդ ըսպաներ եմ, քեզի էլ կըսպանեմ՝ կէղնի քառասուն»։ Կը դառնան շուռ կիդան էտերենք, զաղի մեջ իսանի մեկ շոր քյալա կը գտնեն։

Նոքարին կասա.—Էտի սըխկա, լից շուշեն։

Ու գիգան ուրանց տուն կը հասնին։ Ինչգահ օր բեռներ կը թափեն, ախչիկ կիգա էտ շուշեն կը վերցու, քիչ կառնի կուտա ուր լեզուն ու շուշեն կըտանա ուր տեղ կը դնա։ Ջորս կամ հինգ ամիս գընցնի, էն մեկ օր Խոջեն ջուր կուղե, ախչիկ ջուր կըտանա լվացվելու, Խոջեն կը տեսնի օր ախչիկ էրեխով ա, թուր կը քաշա կուգա, ախչկան կասա.—Գլուխդ կը կտրեմ, քու հանգամանքդ դուզ ասա, էտ ո՞ւմ հետ ես նստե, կայնե։

Ախչիկ կասա.—Խո՛ջա, ըսկի մեկ մարդու հետ ես չեմ նստե, կայնե. էն օր, օր դու էկար, ջուշի մեջ մեկ սիվտակ դեղ կար, լեզուս տվեցի, էնդըրնե է էղե։

Խոջեն թուր կը զարնե տեղ, կը դառնա դիմնա օր էն քյալլից է էղե։ Կը մնա ինը ամիսն օր կը թըմըմի, ախչիկ կը պառկի, կը բերա մեկ տղա. էղնելու պաշտան ձեն կիտա թե.—Ես տկլոզ մեռա, ընծի շոր բերեք։

Շոր օր կը բերին կը հագուն, ձեն կուտա.—Ես անոթի մեռա, ընծի հաց ավեք։

Կը մնա, իրկուն խոշեն դուքնից կիգա։

Կասա.—Պապե, ընծի ինչի՞ չես տանե դուքյան։—Մեկ օր, կամ տասն օր կասա՝ պապեն հ՚անկաճ չի էնա։ Իլլաճ կը կտրվի, էն մեկ օր հետ կը տանա։ Հետը օր կը տանա, թագավորի տղեն ու վաղիրին ջրինթ կը խաղան, կասա։—Պապե, հ՚ելի էրթանք թամաշա էնինք։

Կասա.—Թափտըզ[1], ձիան ձեզի կը տրորեն, դու չը կարնաս հ՚իդաս։

Կըսե.—Քու տուն ջինվի, գելնիմ մեկ բանձր բաղանի վրեն կը կայնիմ։

Գելնին կէրթան ինքն ու պապեն կկայնին մեկ բանցր բաղանի վրա։ Վաղիրի տղեն ջրինթ կը զարկա, թագավորի տղի ձիու փորին կը քիսնի։

Թափտըղ կասա.—Պապե, տեսա՞ր, վազիրի տղեն զարկեց թագավորի տղի ձիու քուռկու աչք փորի մեջ քոռցուց։

Թագավորի տղեն լսեց, էկավ ասեց.—Խոջա, դու ի՞նչ դինաս թե իմ ձիու քուռկի աչք քոռցուց։

Ասեց.—Ես չեմ ասի, իտա Թափտըղ կասա։

Թափտըղն ասեց.—Ես կասեմ աչ աչք քոռցուց, ճակատ չալ ա քուռկու, հ՚ետի ձախ ոտ չալ ա, տասն օրից ետ էլ կծնի,—ասեց։

Թագավորի տղեն գնաց թագավորին վաղիրի տղի վրա զանգատ էրեց, թե վաղիրի տղեն զարկեց իմ ձիու քուռկու աչք քոռցուց։

Ասեց.—Որդի՜, դու ի՞նչ դինաս փորու մեջ քոռցուցեր ա։

Ասեց.—Խոջա-Ալին ասեց։

Ճամփեց Խոջա-Ալուն խանչեց բերեց։

Ասեց.—Թափտըղ, էտ ի՞նչ օյին էր հանիր իմ գըլուխ։

Ասեց.—Պապե, մի՜ վախենա, էլի կասեմ ու ես էլ կիգամ։

Առավ Թափտըղին հետ գնաց։

Գնաց թագավորի դիվան, թագավորին գլուխ տվեց։

Ըսեց.—Խոջա, դու էտ ի՞նչ ես ասե, թե ձիու քուռկու աչք քոռցեր ա։

Ասեց.—Էտ ես չեմ ասե, էտ Թափտըղ կասե։

Ասեց.—Թափտըղ, դու ի՞նչ գիտցար, օր ձիու քուռկու աչք քոռցավ։

---

1 Գոնված (Ծ. Բ.)։

Ասեց.—Ես գինամ աչ աչք քոռցեր ա, ճակատ չալ ա, ձախ ոտ չալ ա, քուռակն էլ որձ ա։ Տասն օրից հետ էլ ղսրախ կը ծնի։

Ըսեց.— Խոջա, Թափտըղ էլ չեմ իտա քեզի։ Կը պահեմ, թե օղորդ էղավ՝ պրծավ, թե օղորդ չէղավ՝ դլոխը կը զարկեմ։

Պահեց, տասն օրիը հետ ղսրախ ծնավ, ծնավ օր Թափտըղի ասած բիրադի օղորթ էր, Թափտըղին էլ չտվեց Խոջին, պահեց ուր հ'առեջ։

Թագավորի ախչիկ լսեց, օր Թափտըղ էտ քուռկու վրայով խոսեր էր, օղորթ էր դուս էկե։ Ուր շորեր ճըղըրտելով դիր գրեր էր թագավորին, թե էտ Թափտըղ պահեր ես ընձի համար, ես էտոր չեմ առնի, աստվոր չեմ մտնի։ Տեսնիս օր ես կուս եմ, որձ մարդու մորթած միսն էլ չեմ ուտի։

Ասեց.—Անիծված, էտ իմ Թափտըղն ա, պահեր եմ ընձի համար խոսքեր հ'իմնալու, խո ես քու համար չե՞մ պահերի։

Մեկ օր թագավորն ու Թափտըղ հ'ելան գացին Խաս-բախչեն։ Ախչիկ օր հ'իմցավ, շատ յաման ուր շորեր ճղրտեց, թե դու պահեր ես ընձի համար։

Ասեց.—Թագավոր, քելա, անկաճ մի՛ էնե։ Գացին Խաս-բախչեն զըվրոնեցին, էկան հավուզի վրեն, էրկու ձուկ փաթըթվան հ'իրար, ծափ տվեցին, թռան բանձրացան ու ընկան ջրի մեջ։

Թագավորն ասեց.—Թափտըղ, ի՞նչ ասին էտ ձկներ։

Ասեց.—Թագավոր, ձուկ ին, ես ի՞նչ գինամ ինչ ասին։

Ասեց.—Դու ի՞նչ գիտցար ձիու փորու մեջ քուռկու աչք քոռցավ, էտի չը գինաս։

Ըսեց.—Նստի ասեմ, կը փոշմընիս։

Ըսեց.—Ասա՛։

Ըսեց.—Ժամանակով քու պես մեկ թագավոր կար, էն թագավոր ուր համար մեկ ջահմար օձ կը պահեր, գիշեր ցերեկ ուր մոտն էր. էղավ, օր թագավոր ծերացավ, ինք թախտից իջավ, տղեն դրեց թագավոր։ Ըսեց. «Որդի՛, իմ ջահմարը միշտ քու հետ կպահես, քեզի լավ կը պահա»։ Տղեն բիրադի վազիրներ փոխեց, մեկ օր էտ թազա վազիրնեը հ'ելան գացին սեյր էնելու թագավորի հետ։ Վազիրի մեկ ըսեց թե. «Թագավոր, էտ մունտառ ջանավար ինչ է, առեր ես քեզի հետ ման կածես»։

Ասեց.—Ախր իմ հերն ա թամպահ էրե։

Ասեց.—Ընտոնք անխելք մարդ են, էտ ջանավա՞ր պըտի թագավորութեն հաստատ պահա։

Ասեց.—Բա ի՞նչ էնիմ էտոր։

Ասեց.—Թուր թալ կտրա, թալ դեն։

Քաշեց թագավոր թուր թալեց, էրից էրկու կտոր, թալեց դեն։ Շահմարն էլ դարձավ թագավորի սրտից զարկեց, մեջքից տվեց դուս, թագավոր մեռավ։ Հավար տարան մեծ թագավորին թե. «Արի՛, քու տղեն շահմարին ըսպանեց, էն էլ՝ քու տղին»։

Թագավորը հ՝ելավ էկավ, տեսավ օր շահմարը մտեր էր քարի տակ։

Ըսեց.—Շահմա՛ր, հ՝ելի արի, էրթանք, ես ու դու առաշվա պես կառավարվինք.

Ըսեց.—Չէ՛, նեա դու քու տղի գերեզման կը մոռնաս, նեա ես իմ պոչ կը մոռնամ։

Ըսեց.—Թագավո՛ր, էն թագավոր փոշմընա՞վ, թե՞ չփոշմընավ ուր տղի թագավոր դնելը։

Ըսեց.—Դու էլ կփոշմընիս, հ՝ելի էրթանք։

Հ՝ելան թագավորն ու Թափտրղ էկան պալատ։ Մի քանի օրից ետ էլի գացին Խաս-պախչեն, էլման թագավորի ախչիկ ուր շորեր ճըղըրտեց, ըսեց.—Դու աստված չունի՞ս, ես կուս եմ, դու էտ Թափտրղ պահեր ես ընձի համար։

Ըսեց.—Էտի իմ Թափտրղն ա, քեզի համար չեմ պահե։

Հ՝ընցան գացին Խաս-պախչեն, էկան զըվըռնեցին, հավուզի վրեն նստան, տեսան էրկու ձուկ փաթըթվան հ՝իրար, ծափ տվին, թռան ընկան հավուզի մեջ։

Թագավորն ըսեց.—Էտ ի՞նչ ըսին, Թափտրղ։

Ըսեց.—Ես ի՞նչ դինամ ինչ ըսին։

Ըսեց.—Դու ի՞նչ գիտցար քուռկու աչք ուր մոր փորու մեջ քոռցավ, էտի չես դինա։

Ըսեց.—Թագավոր, նստե՛, էտոր առարկեն ըսիմ՝ կը փոշմընիս։

Ըսեց.—Ժամանակով մե անբախտ դերձիկ կար, էնքան անբախտ էր, օր ըսկի մուշտարի չուներ. փողոցներուց ճոթի կըտորտանք կը ժողվեր կը բերեր, կը կարեր, ուրիշներու էն խաս կտորից թանկ կծախվեր։ Մեկ օր հ՝ելավ տեսավ, օր մեկ ոսրծիվ հ՝իշեր էր բատանի[1] պատին։ Տեսավ օր էրկու դաղ ղնավուզ փսթթուկ էր ոտ, ըսեց. «էրթամ էտի ղնավուզ պրծում բերիմ, կարիմ ծախիմ, ընձի աշխատանք կէղնի»։ Գնաց ինչ ղըգըր օր բռնեց, առծիվ թռավ, անբախտ դերձրկին տարավ մեկ անվերի մեշի մեջ թալեց, ուրենք

1 Պարիսպ (Ծ. Բ.)։

գնաց, Դարզին դես-դեն իշկեց տեսավ, օր մեկ դեխից ծուխ դելներ, գնաց տեսավ օր շինութեն էր, մտավ մեջ, տեսավ կերակուլ, հաց, հ'ըմեն մեկ բան հազըր էր ու մարդ չկեր։ Հաց կերավ ու գնաց մեկ տախտի տակ տապավ։ Տեսավ հ'իրկուն իրեք հատ հուրի էկան։ Մեծ քուր պզտի քրոջ ըսեց. «Վա՜յ ախչի, անբախտ դերձիկ բերեր են, թողեր իմ մեջի մեջ, գնա բի բախտավորցունք»։ Գնաց էն ղըդըր զըվըռնեց, չը գտավ։ Դարձավ էկավ, ըսեց.—Չկա։ Մեկել քրոջն էլ ճամփեց, էն էլ զըվըռնեց էկավ, ըսեց. «Չկա»։ Հ'ելավ օր ինքը պըտի էրթեր, անբախտ դերձիկը նոր տախտի տակից ղուս էկավ, ըսեց.— Խանըմ, էկիր եմ։

Ըսեց.— Էն լավ օր էկիր ես։

Նստան կերան, խմին, քեֆ էրեցին։ Քնելու վախտ պզտիկ քրոջ ըսեց. «Քու տեղդ տար թալ, անբախտ դերձիկին բախտավորցուս»։ Տարավ թալեց, ինչ իլլաճ էրեց, դերձիկ չգնաց ընտոր մոտ։ Ախչիկ էկավ, ըսեց. «Չէկավ իմ մոտ»։

Միջնեկ քրոջ ըսեց. «Դու տար բախտավորցուս»։ Ընտոր մոտն էլ չգնաց։ Ըսեց՝ «Իմ մոտն էլ չէկավ»։ Մեծ քուրն ըսեց՝ «Իմ մոտ կը քնի՞ս»։ Ասեց.—Հա։

Մեծ քուր ուր տեղ թալեց, ըսեց.—Նեա իմ մեջքի դեն կիգաս, նեա իմ հ'առջի դեն կիգաս, նեա իմ գլխու դեն կիգաս, պըտի իմ յորղան բանձրցուա՝ իմ հ'ոտներու դեն իգաս։ Ինչ ղըդըր օր յորղան բանձրցուց, լանգով զարկեց ղերձ_կի ղլխուն, դերձիկ տեսավ ուր դուքնի դուռ կայնուկ էր։

— Թագավոր,— ասեց,— էն դերձիկ օր ընդոնց մոտ չը քնե, փոշմընա՞վ, թե չփոշմընավ։ Ընդոր պես դու էլ կը փոշմընիս։

Ըսեց.— Հ'ելի էրթանք։

Հ'ելան էկան թագավորի պալատ։

Մեկ քանի օրից հ'ետ, էլի հ'ելան գացին խաս-պախչեն։ Թագավորի ախչիկ մեկ խալմաղալ դրեց, թե՝ «Դու էտ պահեր էս ընձի համար, ես կուս եմ»։

Ըսեց.—Անիծած, էտ իմ թափտըղն ա, էտի ընձի համար եմ պահե, քեզի համար չի։

Թափտըղն ասեց.—Քելա՛, թագավոր, անկաճ մ'էնի։ էկան խաս-պախչեն զըվըռնան, էկան հավուզի վրեն նստան։ Ձկներ փաթթվան հ'իրար, ծափ տվին, թռան ընկան ջրի մեջ։

Թագավորն ըսեց.—էտ ի՞նչ ըսին, թափտըղ։

Ըսեց.—Ես ի՞նչ գինամ ինչ ըսին, թագավոր, ձուկ ին, թռան ընկան։

Ըսեց.—Դու ի՞նչ գիտցար քուռկու աչք մոր փորու մեջ բոցավ, էտ ընչի՞ չես գինա։

Ըսեց.—Թագավո՛ր, կասեմ, հրմա կը փոշմընիս։

Ըսեց.—Ասա։

Ըսեց.—Թագավոր, ժամանակով քու պես մեկ թագավոր կար,—ըսեց,—էտ թագավորին մեկ տուտի ղուշ ուներ, օրերից մեկ օր, Լրկու ղուշ էկան հ'իշան թագավորի փանջարեն, ղշերը իրար հետ խոսացին, ըսեց. «Ինչ կասեն, տուտի, էտոնք»։ Ըսեց.— էտոնք իմ հոր քրոջ տղեքներն են, հարսնիք կա, էկեր են ընձի կը խանչեն։

Ըսեց.—Տուտի, թողեմ՝ էրթաս չիգաս։

Ըսեց.—Դիդամ, թագավոր։

Ըսեց.—Դեհ,—ըսեց,—օր գիգաս, ձեր էրկրիցը ընձի համար մեկ ընծա բեր։

Շնորհակալութեն աւավ թագավորից ու թռավ գնաց։ Գնաց տասն օր, յա տասնհինգ օր մնաց։ Էն մեկ օր թագավոր տեսավ օր տուտին էկավ, բերեց մեկ խնձորի կուտ գրեց թագավորի չոքին։ Թագավորը խանչեց բաղմանչուն, ասեց. «Տար մեկ տեղ տընկե»։ Տարավ տնկեց, չորս տարի, յա հինգ տարի մնաց, տեսավ օր խնձորը բար տվեց։ Բաղմանչուն մեկ շատ անպետք կնիկ ուներ՝ մեկ օր թագավորը տեսեր էր։ Խնձորն օր հասավ, բաղմանչին քաղեց, չորս հատ դրեց բոթնոցի մեջ, էկավ հավուզի մոտ, գրեց լվացվավ, օձն հ'ելավ խնձորները դեղեց, բաղմանչին խաբար չէղավ, բերեց գրեց թագավորի հ'առեջ, ըսեց. «Քու ղըշի բերած մատահն[1] ա»։

Թագավորն ասեց.—Տարեք տվեք, իմ հեր ծեր ա, թըղ իմ հեր հ'առեջ ուտա։

Ինչ զդար օր տարան տվին, կերավ, տեղոց տեղ չաթլամիջ էղավ։ Հավար բերին թագավորին, թե քու հեր օր խնձորը կերավ, չաթլամիջ էղավ։ Թագավոր հերսոտավ, ղշու վիզ քաշեց։ Բաղմանչին ուր կնկան շատ դառ ծեծեց, ջանին օր հասավ, ըսեց. «Էրթամ էն խնձորից, օր թագավորի հեր կերավ մեռավ, ես էլ ուտեմ, մեռնիմ»։ Էկավ քանի կերավ՝ չմեռավ, ըսեց՝ «Էրթամ ջուր խմեմ, բալի նոր մեռնիմ»։ Լվացվավ, ջուր խմեց, ուր սուրիաթ ջրի մեջ տեսավ, օր շատ խորոտցեր էր։ Նստավ հավուզի մոտ, բաղմանչին էկավ, տեսավ օր մեկ խանըմ նստուկ էր հավուզի մոտ, զրվըռնեց էկավ, բան չասեց, մեկ էլ զրվըռնեց, էկավ տեսավ նստուկ էր՝ բան

---

1 Երախայրիքը, առաջին պտուղը (Ս. Ի.)։

չասեց, մեկ էլ զրվրռնեց, էկավ, ըսեց. «Խանըմ, հ'ելի, մութն ա, բաղի դուռ փակեմ»։

Ըսեց.—Ես խանում չեմ, ընձի չը ճանչընա՞ս։

Ըսեց.—Օր դու չես խանըմ, բա ո՞ր կա քեղնե լավ խանըմ։

Ըսեց.—Ես քու կնիկն եմ։

Ըսեց.—Վա՜յ, աստված չիտա դու կնկաս պես էղնիս, իմ կնկա անուն մի՛ տա, իմ սիրտ խառնեց։

— Դրուստ ըսեցի, ես քու կնիկն եմ, ֆիլան տեղ դու ընձի ծեծեցիր։

— Հրպա իմա՞լ էղավ օր դու խորոտկրցար։

Ըսեց.—Էկա էն թագավորի հոր կերած խնձորից կերա, ջուր խմեցի՝ խորոտկցա։

Բաղմանչին հ'ելավ մեկ օր գնաց թագավորի պալատը, տեսավ օր թագավորն ու վազիրն ու նազիրը կնկա բաս կէնեն. էն կասեր՝ իմ կնիկն ա խորոտ, էն կասեր՝ իմ։

Բաղմանչին ասեց.—Իմ կնիկ ձեր հ'ըմեն կընկտոց մոտեն խորոտ ա։

Թագավորն ասեց.—Էտ ի՞նչ բան էր օր դու ասեցիր, ես մեկ օր տեսա, իմ սիրտ խառնեց, հաց չկարցա ուտել։ Քու կնկա բասն օր էրեցիր, էլի իմ սիրտ խառնեց։

Բաղմանչին ըսեց.—Իմ կնիկ օր քու կնկաց խորոտ չէղավ՝ իմ գլուխ զարկ։

Բերեցին տեսան օր բաղմանչու կնիկ թագավորի կնկանց խորոտ էր։

Ըսեց.—Բաղմանչի, ես մեկ օր տեսա, քու կնիկ շատ գեշ էր, էտ իմա՞լ խորոտկրցավ։

Ըսեց.—Էն խնձորներն օր քու հեր կերավ՝ օձ դեղեր էր, իմ կնիկ էն խնձորից կերի՝ խորոտկցեր ա։

Ըսեց.—Թագավո՛ր, էն թաղավոր օր ուր տուտու վիզ քաշեց, փոշմընա՞վ, թե՞ չփոշմընավ։

Ըսեց.— Ի՞մալ չըփոշմընավ, օր համ հեր գնաց, համ տուտին գնաց։

Ըսեց.—Ցոթը ղատ էն թագավորից շատ փոշմընիս, հ'ելի էրթանք։

Հ'ելան էկան։ Էկան ախչկա ամարաթներու դեն, ախչիկը էլի հլելեն[1] գրեց, թե. «Դու էտ տղին պահեր ես ընձի համար»։

---

[1] Աղմուկ (Ծ. Կ.)։

Թափտրդ մեկ ձմերուկ առավ, ու դնաց ախչկա ամարաթը, ինքը ու թաղավորը։ Գացին նստան, թագավորից դանակ հ՚ուզեց օր կիսեր, թաղավոր հանեց ու թանկագին ակունքներով դանակ տվեց։ Թափտրդ էծկեց թաղավորի զրուցելուն հետ՝ դանակ պահեց։ Մեկ էլ թաղավորից դանակ հ՚ուզեց։

Թաղավոր ասեց.—Տվեցի ախբր։

Թափտրդն ասեց.—Չտվիր։

Դանակը կորավ, որից հարցուց, մեկն չասեց, թե դանակն իմ մոտն ա։

Թաղավորն ասեց.—Դոններ շինա, տկլոզնանք՝ տեսնանք դանակ վի՞ր մոտն ա։ Հ՚առեջ Թափտրդ տկլոզցուց, չգտան, թագավորին էլ տկլողցուց։ Թագավորի ախչիկ ուր բրդեր (ծամեր) փետեց թե.—Դու էտ ինչ բան էր էրեցիք, հըլը ես քու որդին եմ, էտոնք բիրադի իրլդի ախչիկներ են, ամոթ ա։

Թափտրդն ասեց.—Անկարելի ա, պըտի տկլողնան։ Եռսուն ինը շառին էլ տկլոզցուց, բիրադի քսան տարեկան տղա ին։ Ըսեց.—Թաղավո՛ր, ձկներու առարկեն կը հարցուցեր ընձնե, փոշմանա՞ր, թե՞ չը փոշմանար։

Թաղավոր բերեց եռսունինը ջառիոց գլոխ զարկեց, ախչկան էլ։ Նոր Թափտրդ վերուց դնաց ուր ամարաթ։ Էն հասավ ուր մուրադին, դու էլ հասնիս քու մուրազին։